21 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1994. ՇՈՐԵՔՇԱԲԹԻ # 181 (684)

Ազգ

Azg
yerevan daily

SABCO
OVERSEAS TRADING LTD.

LIMASSOL CENTRE,
BLOCK B, SUITE 307,
P. O. BOX 6543
TEL +357-5-370962
FAX. +357-5-370945

OUR BANKERS: B. E. M. O. BANK, LIMASSOL, CYPRUS; FEDERAL BANK OF THE MIDDLE EAST, LIMASSOL, CYPRUS; BANK OF CYPRUS, LIMASSOL, CYPRUS; HELLENIC BANK, LIMASSOL, CYPRUS

Հայաստանի եւ ԱՊՀ երկրների համար
Կիպրոսի եւ Ռոտերդամի պահեստներից

ՃՈՊՈՒՏ, ՄԹԵՐՔ, ԽՄԻՉՔ, ԿՀՀՈՒԻՑՔ

ուղիղ հասցեատիրոջը՝ նավով եւ ինքնաթիռով

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մեմ եմ տէր

Արդէն երեք տարեկան է մեր նորանկախ պետականութիւնը: 1991ի սեպտեմբերի 21ին հայ ժողովուրդն իր ազատ կամքով, սահմանադրական նախածեռնութեամբ ու կարգով, որոշ տատանումից յետոյ արդէն վճռական ընտրութիւն կատարեց: Նորից, արդէն որերորդ անգամ մեր բազմադարեան պատմութեան ընթացքում, մենք փորձեցինք ինքնահաստատուել որպէս ազգ-պետութիւն, փորձեցինք հաղթահարել աշխարհին ներկայանալ որպէս նրա իրաւահաւասար անդամ, պետական ինքնուրոյն միաւոր:

Ճանր էր երկունքը, բէեւ, բուռ է, դժուար չեղաւ ծնունդը, սակայն անցնող երեք տարին վկայ՝ տառապալից է լինելու հասունացումը:

Պատճառը ոչ դարաբաղեան պատերազմն է եւ ոչ էլ շրջափակումը: Ընդհակառակը, դրանք որոշ առումով պետականութեան կայացմանը նպաստող երեւոյթներ են, ազգն ու պետութիւնը պայքարի ու զրկանքների մէջ միաւորող, բծող ազդակներ: Բուն պատճառը հոգեկան ու մտաւոր անհասունութիւնն էր: Տասնամեակներ շարունակ մեր մէջ տիրապետել էր սեփական արժանիքների գերագնահատման եւ, միւս կողմից, ուրիշների նկատմամբ թերարժէքութեան հոգեբանութիւնը, մտայնութիւնը: Մի կողմից մեզ բուռ էր, թէ մեր զրկանքների դիմաց այնպիսի արժանիքներ ենք ձեռք բերել, որ ողջ աշխարհն սիրուած է հատուցում կատարելու մեզ: Եւ միւս կողմից կարծում էինք, որ այնքան ենք տկար, որ ինքնաբերաբար գաղութարարը կը փոխարինուի հոգատարով, անդայման արեւմտեան տիպի: Երկու դէպքում էլ՝ նորից փաստորէն կախեալ դրսից:

Մինչդեռ թեւակոխել ենք մի նոր աշխարհ, որտեղ տիրապետում են մեզ անծանօթ արժէքներ, այլ յարաբերութիւններ ու հոգեբանութիւն: Այստեղ ոչինչ ինքնին չի տրւում, չի տրուելու: Ամէն ինչ իր գինն ունի, կարծր դրամանիշով: Այստեղ ազգն ինքը պէտք է կերտի իր կենսագրութիւնն ու պատմութիւնը, տնօրինի իր ճակատագիրն ու առագան, անընդհատ հաշուի նստելով այլոց շահերի ու շահախնդրութիւնների հետ: Այստեղ ի վերջոյ ծերբազատուելու ենք հոգատարուելու հոգեբանութիւնից, նոյնիսկ սեփական կառավարութեան հոգատարութիւնից: Այստեղ մենք ենք դառնալու մեր տէրը, եւ սեփական իշխանաւորի դարաւոր կանութիւնն սկսուելու եւ վերջանալու է մեր գործերի, մեր կեցութեան [illegible] գաւորմամբ, համակարգումով, [illegible]ատասխան մեր հաւաքական կամքի: Վերջ դրսից շնորհուող մատակարարումներին, վերջ ներսից ակնկալուող բաշխումներին:

Պետութիւնը այլեւս պահեստ չէ, ոչ էլ պահեստապետ: Նա մեր գործերի կարգաւորողն է միայն, մեր հաւաքական կամքը արտայայտողը: Մենք ենք պետութիւնը, հաւաքաբար: Մենք ենք որոշելու, մեր մեծապասնութեան ձայնով, նրա կատարելիները, նրա կատարողները: Այն արժանի է լինելու մեզ, եւ մենք՝ նրան: Այստեղ 3-րդ կողմ չկայ, չի լինելու: 3-րդ կողմը վերջն է լինելու մեր անկախ գոյութեան, այսինքն մեր ազգային յեւազայ լիարժէք եւ լիարիւն զարգացման: Դժուա՞ր է սովորել մեզ համար նոր այս կացութեան: Մենք արդէն սկսել ենք սովորել, վարժուել: Առաջիկայ ընտրութիւններին մենք աւելի ծիշտ կ'ընտրենք: Սխիրուած ենք արագ անցնել դեռահասութեան պարտադիր շրջանը, դէպի ազատ շունչ տանող այս անվերադարձելի ընթացքը:

Երեք տարի է անցել: Անցել ենք մեր ազգային իւրօրինակ Ուսիկոնը: Սկսել ենք հոգալ մեր հոգսերը: Վաղը կը սկսենք տէր զգալ մեզ: Մեր գործերը կը սկսենք տնօրինել լիարժէք տիրոջ իրաւունքով:

ՄՐՑՊԵՏԱԿԱՆ

Շարունակվում է Տեր-Պետրոսյանի այցը Ռումինիա

Կնքվեց ռումին-հայկական բարեկամության եւ գործակցության պայմանագիր

ՏԱՄԼԵՏ ՀԱՍՊԱՐՅԱՆ,
Տասուկ թղթակից, Բուխարեստ

«Վազգեն Ա-ն մարմնացումն է Ռումինի եւ հայ ժողովուրդների բարեկամության, եւ փաստորեն, 40 տարի շարունակ Ռումինիայի հոգեւոր եւ մշակութային դեսպանն էր Հայաստանում», երեկ հրեկոյան Բուխարեստում գտնվող Ռումինիայի ուղղափառ եկեղեցու հայրապետական դղեակում ռումին կրոնապետի ամենասպասելի դպրոցական Քլոֆ Տիֆֆի հետ հանդիպման ժամանակ այսպես ասաց նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նախագահը շնորհակալություն հայտնեց ռումին հովվապետին հայրապետ Վազգեն Ա-ի հուղարկավորությանը ռումինական բարձր պատվիրակության մասնակցության համար:

Այնուհետեւ Տեր-Պետրոսյանն իր խոսքում հակիրճ ներկայացրեց եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում յուզիչներներ անցկացնելով ռումինական ուղղափառ եւ Հայ առաքելական եկեղեցիների միջեւ, որոնք երկուսն էլ ժամանակին ենթարկվել են հալածանքների իրենց հավատարմության համար սեփական դավանանքներին եւ, փաստորեն, երկուսն էլ դարձել ազգային խորհրդանիշներ:

Նախագահն իրազեկորեն ներկայացրեց նաեւ Հայ առաքելական եկեղեցու այսօրվա վիճակը, համայնավար տասնամյակներից հետո նոր ցաքմերեն աշխուժորեն մասնակցելու անկախ Հայաստանի առաջան կերտելու գործում:

Հանդիպմանը ռումինական կողմից մասնակցում էին արտգործնախարար Տեոդոր Մելեշկանուն եւ բարձրաստիճան հոգեւորականներ, որոնց մեջ նաեւ ռումինահայոց թեմի հոգեւոր առաջնորդ Տիրան արեղիսկոպոս Մարտիկյանը եւ ծայրագույն վարդապետ, դոկտոր Դարեն Պարոնյանը, հայկական կողմից նախագահին ուղեկցող նախարարներ եւ այլ պատասխանատուներ:

Երեկ սեպտեմբերի 20-ի երեկոյան, երկօրյա պաշտոնական այցով Ռումինիայում գտնվող հայկական պատվիրակությունը ռումինական կողմի հետ կնքեց երկու երկրների միջեւ համագործակցության մի շարք փաստաթղթեր: Նախագահներ Իլիեսկուն եւ Տեր-Պետրոսյանը Պոտրինն ոլորտում ստորագրեցին բարեկամության եւ համագործակցության պայմանագիր, միջկառավարական համաձայնագրեր ստորագրվեցին նաեւ լեզուների խրախուսման եւ փոխադարձ պատշաճության, գիտության, կրթության, մշակույթի եւ սպորտի բնագավառներում համագործակցության, օդային հաղորդակցության մասին: Պայմանագրեր ստորագրվեցին նաեւ զանգվածային լրատվության բնագավառում, մասնավորապես Ռումբրեսի եւ Արմենպրեսի, Ռումինիայի պետհեռուստառադիոյի եւ ՀՀ հեռուստառադիոընկերության միջեւ: Մինչ այդ, նախագահ Տեր-Պետրոսյանն այցելեց Ռումինիայի խորհրդարան եւ կարճ ելույթ ունեցավ այնտեղ: Նախագահը եւ հայկական պատվիրակությունն այցելեցին նաեւ Բուխարեստի Հրեաստանեաց հայկական եկեղեցի, հանդիպեցին տեղի հայ համայնքի հետ: Ռումինիայից մեկնելուց առաջ նախագահ Իլիեսկուն եւ Տեր-Պետրոսյանը հանդիպեցին լրագրողների հետ:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21

Շնորհավորանք Անկախության տոնի առթիվ

Անկախության տոնի առթիվ Հայաստանի Գերագույն խորհրդի Պատգամավորության եւ նրա ներքին գործերի հարցերի մշտական հանձնաժողովը շնորհավորել է հայոց պետականության կերտման ճանապարհին զոհված ու անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքներին, պատգամավորական ու ազատագրական մարտերի ընթացքում վիրավորված քաջարիներին ու ազատամարտիկներին, սահմանամերձ շրջաններում մարտական գործողությունների հետեւանքով տուժած խաղաղ բնակիչներին, Հայաստանի երկրապահ զինուորներին, սահմանապահներին, հայկական բանակում եւ ներքին զորքերում ծառայողներին, պատերազմի վետերաններին եւ այլն:

«Հավերժ փառք զոհվածներին, արագ առողջություն վիրավորներին, ողջություն մարտնչողներին, տկունություն նախապատրաստվողներին, մխիթարություն որդիներին ու դստերներին կորցրած ծնողներին, ամուսին կորցրած այրիներին, ծնող կորցրած մանուկներին, բարի երթ անմահների գործը շարունակողներին», ասվում է շնորհավորական խոսքում:

«Ազգի» խմբագրությունը սիրով միանում է այս շնորհավորանքներին:

ՀՕԱԿ-ՀՅԴ հանդիպում

Սեպտեմբերի 20-ին ՀՅԴ Հայաստանի Կոմ գրասենյակում տեղի ունեցավ երկու կուսակցությունների ղեկավար մարմինների ներկայացուցիչների հանդիպում: Հանդիպման ընթացքում քննարկվեցին արցախյան հակամարտության կարգավորման շուրջ ընթացող բանակցությունները, հանրապետության ներքաղաքական իրավիճակը, սոցիալ-տնտեսական կացությունը, համագործակցության հնարավոր ոլորտներն ու ձեւերը:

Առանձին քննարկվեցին երկու ավանդական կուսակցություններին մտահոգող այլ հարցեր:

■ *Նշվեց Սասունի ինքնապաշտպանության 100 ամյակը: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը սեպտեմբերի 20-ին հրավիրված գիտական կոնֆերանսում նշեց Սասունի 1894 թվականի ինքնապաշտպանության 100 ամյակը հոբելյանը: Բացման խոսքում ինստիտուտի տնօրեն Հրանտ Ավետիսյանը նշեց, որ մեկ տարի շարունակ պատրաստվել են մեր ժողովրդի հերոսական պատմության էջերից մեկը՝ Սասունի գոյամարտը, հիշատակն ժեռով նշելու: Պատրաստվել են դասախոսություններ, որոնք բազմակողմանիորեն կլուսաբանեն անցյալ դարի հերոսամարտին առնչվող բոլոր դրվագները՝ նոր մոտեցումներով ու նոր հիմնավորումներով: Հայաստանի անվանի ակադեմիկոսներն ու դոկտորները կոնֆերանսում զեկուցումներ կարդացին «Արեւելյան կոտորածների հարցականությունը Օսմանյան Թուրքիայում 1880-90 թվականներին», «Սասունի 1894 թվականի առաստամբությունը եւ հայ ազգային կուսակցությունները», «Սասունի դեպքերի արձագանքները Ֆրանսիայում» եւ այլ թեմաներով:*

ՓԱՍ

ԱՇԽԱՐՀ

Ամերիկյան զորքը Հաիթիում

ՊՈՐՏ Օ ՊՐԻՆՍ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ, WSJ: Երեք հազարանոց ամերիկյան առաջին զորախումբը ցամաքահանում կատարեց Հաիթիում, «կայունությունը վերահաստատելու» կարգախոսի տակ: Նրանց գլխավոր պարտականությունն է լինելու վտարանդի նախագահ Արիստիդի իշխանության խաղաղ վերահաստատման կազմակերպումը, նախորդ օրը երկրի զինվորական իշխանության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն: Առաջիկա օրերին նրանց ընդհանուր թիվը կհասնի 15 հազարի: Ա ռաջին զինվորները ուղղաթիռներից պարաշյուտով իջեցվեցին մայրաքաղաք Պորտ Օ Պրենսի օդանավակայանի շրջակայքը, առանց որեւէ դիմադրության հանդիպելու, մինչ մոտակա նավահանգստում հավաքված հաիթցիները ողջունում էին ծովածոց մտնող ամերիկյան ռազմանավերին: Այսուհանդերձ, նախագահ Քլինթոնը մամուլի առաջին էջերից Հաիթիում տիրող դժվար եւ անորոշ վիճակը: Նախորդ օրը Ս. Նահանգների ներկայացուցիչների պալատը 45-ի դեմ 353 ձայնով հավանություն էր տվել կիրակի օրը Քլինթոնի ծեռք բերած համաձայնությանը:

ԴԱՐԱԲԱՂ

Չնայած անդորրին՝ իրադրությունը մնում է անկանխատեսելի

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՅԱՆ,
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ:

Չնայած ռազմաճակատներում հաստատված անդորրին, իրադրությունը դարաբաղյան հակամարտության գոտում մնում է անկանխատեսելի: Ադրբեջանական բանակի ստորաբաժանումները հավատարիմ են մնում զինադադարի մասին իսլամումների մարտավարությանը: Սեպտեմբերի 20-ի օրվա առաջին կեսին հրաձգային զենքերից, այդ թվում խոշոր տրամաչափի գնդացիրներից եւ զենիթային կայանքներից գնդակոծվել են Մարտակերտի եւ Աղդամի շրջանների հայկական դիրքերը: Տուժածներ չկան: Ղարաբաղյան ուժերը դրանցում միջոցներ չեն դիմել: Լավատեղյակ աղբյուրների վկայությամբ, հանդուրժողության արեւելյան սահմաններում նկատվում են հակառակորդի կենդանի ուժի եւ հարձակողական բնույթի զինտեխնիկայի կուտակումներ:

«Մենք չենք կասկածում, որ Ադրբեջանը պատրաստվում է նոր հարձակումների, եւ դա բնական է հակամարտ կողմերի անվստահության պայմաններում», ասաց սեպտեմբերի 20-ին ԼՂՀ Նախարարների խորհրդում կայացած բրիֆինգում հանդուրժողության արտգործնախարար Արկադի Ղուկասյանը: Լեռնային Ղարաբաղը անհերքելի տվյալներ ունի, որ հարեւան հանդուրժողությունը զինված ուժերը ակտիվորեն համալրվում են նորակոչիկներով եւ սպառազինությամբ նոր խմբաքանակներով»: Ադրբեջանի ռազմական եռանդում «նախապատրաստությունները վկայում են այն մասին, որ պատերազմական Բաքուն առայժմ հոգեբանորեն պատրաստ չէ հիմնախնդրի խաղաղական կարգավորմանը: Ըստ արտգործնախարարի, սասնդի դերձախոս վկայությունն են նաեւ վերջերս Մոսկվայում ավարտված փորձագետների բանակցությունների 3-րդ փուլի արդյունքները, որոնց ընթացքում, «չնայած Կազիմիրովի հերոսական ջանքերին, դիրքորոշումների մերձեցում այդպես էլ չարձանագրվեց»: Ղուկասյանը կասկածամտորեն է տրամադրված մոսկովյան բանակցությունների արդյունավետության մեջ, քանի դեռ «հազիվ թե հնարավոր լինի հասնել խաղաղական մեծ համաձայնության ստորագրման, եթե Ադրբեջանը չմեղմացնի իր պահանջները»:

Տես էջ 2

■ *Թուրքիան կրարձրացնի Ղարաբաղի հարցը ՄԱԿ-ում: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մուսթաֆա Սոյսալը հայտարարել է իր երկրի մտադրության մասին ՄԱԿ-ի 49-րդ գլխավոր ասամբլեայի օրակարգ մտցնել դարաբաղյան բախման եւ հայկական ագրեսիայի հիմնահարցերը: Արտգործնախարարը հույս է հայտնել, որ Թուրքիան այս հարցում կստանա Ամերիկայի Միացյալ Նահանգների աջակցությունը, որպես նրա դաշնակից տարածաշրջանում:*

ԼՈՅՍԱՆ ՏՊՊՆ

ԱՇԽԱՐՀ

Ամերիկան Հաիթիում

ՊՈՐՏ Օ ՊՐԻՆՍ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ, WSJ: Երեք հազարանոց ամերիկյան առաջին զորախումբը ցամաքահանում կատարեց Հաիթիում, «կայունությունը վերահաստատելու» կարգախոսի տակ: Նրանց գլխավոր պարտականությունն է լինելու վտարանդի նախագահ Արիստիդի իշխանության խաղաղ վերահաստատման կազմակերպումը, նախորդ օրը երկրի զինվորական իշխանության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն: Առաջիկա օրերին նրանց ընդհանուր թիվը կհասնի 15 հազարի: Ա ռաջին զինվորները ուղղաթիռներից պարաշյուտով իջեցվեցին մայրաքաղաք Պորտ Օ Պրենսի օդանավակայանի շրջակայքը, առանց որեւէ դիմադրության հանդիպելու, մինչ մոտակա նավահանգստում հավաքված հաիթցիները ողջունում էին ծովածոց մտնող ամերիկյան ռազմանավերին: Այսուհանդերձ, նախագահ Քլինթոնը մամուլի առաջին էջերից Հաիթիում տիրող դժվար եւ անորոշ վիճակը: Նախորդ օրը Ս. Նահանգների ներկայացուցիչների պալատը 45-ի դեմ 353 ձայնով հավանություն էր տվել կիրակի օրը Քլինթոնի ծեռք բերած համաձայնությանը:

ԱԶԳ

տեղական

ԴԱՐԱԲԱՂ

Չնայած անդորրին, իրադրությունը անկանխատեսելի է

Սկիզբը էջ 1

Արտաքին գործոց նախարարի կարծիքով, Լեռնային Ղարաբաղը բավականին լուրջ գիջումներ է արել, եւ հերթը այժմ Ադրբեջանինն է: Ռազմաճակատներում հաստատված զինադադարը բավականին փխրուն է, քանի որ «ադրբեջանական կողմը հրաժարվում է հրադադարի ոեժիմի ամրապնդմանն ուղղված քայլերից, պահանջելով դրանց զուգահեռ դուրս բերել դարաբաղյան ուժերը վերահսկող տարածքներից: Ղարաբաղյան իշխանությունները մնում են այն կարծիքին, որ նախ եւ առաջ պետք է լուծվեն ռազմատեխնիկական բնույթի հարցերը, այսինքն՝ կրակի դադարեցման ռեժիմի ամրապնդման հետ կապված հիմնական դիրքերը»:

Մեկնաբանելով ԵԱՀԽ Մինսկի խմբի շրջանակներում սեպտեմբերի 12-ից 14-ը Վիեննայում անցած բանակցությունների ընթացքը, Արկադի Ղուկասյանը նշել է, որ հանդիպումը ինքնակոչ են անվտանգության միջազգային ուժերի ձեւավորման եւ Ռուսաստանի ու Եւրախորհրդակցության միջնորդական ջանքերի կոորդինացման հարցերը: Արտգործնախարարի խոսքերով, Ռուսաստանի ներկայացուցիչ Վիեննա, քանի որ նախնական պայմանավորվածության համաձայն, հանդիպումը պետք է կայանար սեպտեմբերի 21-ին: Մեղադրանալով անվտանգության միջազգային ուժերի հարցին, Ղուկասյանը նշել է, որ չի բացառվում, որ տանջաշի ուժերը բազմազգ կլինեն, թեեւ անմենայն հավանականությամբ գերակշռող մասը կլինեն ռուսական ուժերը: Առայժմ բաց է մնում այն հարցը, թե ում հովանու ներքո երբվանից կտեղակայեն խաղաղարար ուժերը: «Եւ Ռուսաստանը, եւ ԵԱՀԽ-ն ունեն մի շարք առավելություններ, օրինակ՝ ՌԴ-ն ունի զորքեր, իսկ ԵԱՀԽ-ն՝ ոչ: Սակայն Ռուսաստանը դատապես չէ ֆինանսավորել խաղաղարար առաքելությունը, միգուցե այդ խնդիրը կարող է լուծել ԵԱՀԽ-ն: Մնում է միայն միավորել նրանց ջանքերը», ասաց Ղուկասյանը:

ԼՂՀ արտգործնախարարի խոսքերով, առաջին անգամ բանակցություններում էր մասնակցել «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքի» ներկայացուցիչը, ինչը, ըստ Ղուկասյանի, խոսում է այն մասին, որ Բաքվի դիրքորոշման մեջ վերջապես նկատվում են իրադարձությունների բույլ նշույլներ, թեեւ սկզբունքային հարցերում կողմերը մնում են մնասասն: Վերջում պրն. Ղուկասյանը հիշեցրեց, որ մոտ ժամանակներս երկրան կժամանի ԵԱՀԽ Մինսկի խմբի նախագահ Յան Էլիասոնը կամ նրա տեղակալ Պիեռ Անդրեմանը:

Ղարաբաղը ստացավ ՀՔԱ-ի վստահության քվեն

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՓՍՍ: Պրահայում ավարտվեց միջազգային հելսինկյան հաղորդակցական ասամբլեայի (ՀՔԱ) կոորդինացիոն խորհրդի նիստը: Նշվեց այսօր «Սնարի» բդպակցին տարածեց «Հելսինկյան նախաձեռնություն-92» Լեռնային-Ղարաբաղի մասնաճյուղի կոորդինատոր, Պրահայի Ֆրանսիայում ներկայացուցիչ Կարեն Հանջանյանը, Ադրբեջանի դատվիրատության քանքերը ՀՔԱ-ի կազմից դադարեցնելու ուղղությամբ հաջողություն չունեցան: Նրա խոսքերով, նիստի կողմից ընդունված հայտարարության մեջ ասվում է, որ Լեռնային Ղարաբաղի Ն-92» կոմիտեն, որի գործունեությունն արժանացավ Ֆորումի բավական բարձր գնահատականին, ՀՔԱ-ի դուրս գրված միավոր է, եւ հրավիրվել նրանից ասամբլեան մտադիր նաեւ առաջարկում: Բանվի ներկայացուցիչներին չհաջողվեց նաեւ հասնել Ղարաբաղի այս կոչված ադրբեջանական հանրության ներկայացուցիչներին Լ-92» կոմիտեի կազմում ընդգրկելու ուղղությամբ: Օհանջանյանը տեղեկացրեց, որ նիստի մասնակիցները ճանաչել են նաեւ Բոսնիայի, Դրինի խնդիրները, շեշտելով եւրոպական ասամբլեան բախումների լուծման եւ հաղորդակցական միությունների ստեղծման գործընթացի բարձրացնելու անհրաժեշտության մասին:

Հանրապետությունում դիտավորյալ սպանությունների թիվը նվազում է, թեեւ կատարված թալանի տեսակի հանցագործությունների բացահայտման ծավալները հասնում են ընդամենը 30-40 տոկոսի: Այս մասին երեկ հայտարարեց Արտավազդ Գեւորգյանը, որը ժուռնալիստի տանը լրագրողների հետ կազմակերպված հանդիպմանը ներկայացրեց իր հայտարարությունը: Գլխավոր դատախազը նշեց, թե դատախազությունը իրավասության մյուս մարմինների հետ շարունակում է հետեւողական պայքարը ծանր հանցագործությունների դիտավորյալ սպանությունների, կաշառակերության, ոստիկանական դիտավորյալ սպանությունների դեմ:

Մասնավորապես նշվեց, թե շատ տեղական խորհուրդներ, իսկ վերջերս նաեւ նրանց նախագահությունները, ցուցաբերելով անսկզբունքայնություն, խոստանում են հանցագործություն կատարած պատգամավորներին քրեական պատասխանատվության կանչելու համաձայնություն տալուց:

Փաստորեն, 1994-ի առաջին կիսամյակում ներկայացված 24 միջնորդություններից հանցանք կատարած պատգամավորներին քրեական պատասխանատվության կանչելու համաձայնություններ են տվել միայն 5 դեպքի առթիվ: Հարցի վերջնական լուծման նպատակով ՀՀ դատախազությունը դիմում է ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, որը որոշես կանոն դրական լուծում է տալիս գլխավոր դատախազի միջնորդություններին: Սակայն, վերջերս քրեական պատասխանատվության կանչելու համաձայնություն տալը ԳԽ-ի նախագահությունում մերժվում է ԳԽ իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ: Գլխավոր դատախազը որպես օրինակ նշեց Էրեբունու երջանի ժողդատավոր Ժաննա Կոստիկյանի դեպքը: Արմավիրի երջխորհրդի եւ Զարթոնքի գյուղխորհրդի պատգամավոր Հունան Ղազարյանի եւ Էջմիածնի քաղխորհրդի պատգամավոր Դավիթ Պետրոսյանի կողմից խորդենու յուղի վաճառքի գործարքներում կեղծիքներ թույլ տալու փաստի վերաբերյալ ՀՀ դատախազության ուղարկված միջնորդությունները մերժվել են Արմավիրի երջխորհրդի եւ Էջմիածնի քաղխորհրդի նախագահությունների կողմից: Նույն միջնորդությունը, 1994 թ. օգոստոսի 2-ի որոշմամբ մերժել է նաեւ ՀՀ ԳԽ նախագահությունը: Ընդորում, ելնելով այն փաստից, որ պատգամավորներ Հունան Ղազարյանին եւ Դավիթ Պետրոսյանին քրեական պատասխանատվության կանչելու համար համաձայնություն չտալը չի բխում քրեական գործի քննությամբ ձեռք բերված օբյեկտիվ տվյալներից, ՀՀ դատախազությունը նշել է միջնորդությունը եւ երկրորդ անգամ ստացել մերժում:

«Ստեղծվել է մի իրավիճակ, երբ ծանր հանցագործությունների դեմ մղվող պայքարը լրջորեն վտանգված է», հայտարարեց Արտավազդ Գեւորգյանը: Մյուս կողմից, նրա կարծիքով, ոչ մի քրեական գործով չպետք է խախտվի նաեւ կասկածյալի պատասխանվածության իրավունքը:

Գլխավոր դատախազը նաեւ հայտնեց, թե բազմաթիվ հանցագործությունների «հեղինակներ» գտնվում են հանրապետությունից դուրս, եւ սեպտեմբերի 19-ի դրությամբ հետախուզվողների թիվը հասնում է 2145-ի: Նա նաեւ նշեց, թե այժմ դատապարտվածների թիվը հասնում է 6000-ի, որից 10-ը կրելու են մահապատիժ: Ի դեպ, նա ժամանակավոր համարեց մահապատժի վերացումը: Արտավազդ Գեւորգյանը խոսեց նաեւ բանտերի եւ ուղղիչ աշխատանքային գաղութներում տիրող իրավիճակի, դատապարտվածների հետ անհարժեշ աշխատանք տանելու եւ այլ խնդիրների մասին, որոնք այսօր առավել քան երբեւէ դարձել են հրատապ:

ՀԱՍԱՆ ԱԱԱՏՅԱՆ,

ԵՐԵՎԱՆ

Ա. Գեւորգյանը մեղադրում է ԳԽ իրավական հարցերի հանձնաժողովին

ՀԱՄԱՌՈՏ

Կտրոնով սննդամթերք բնակչությանը

ԵՐԵՎԱՆ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՓՍՍ: Սեպտեմբեր ամսին մայրաքաղաքի բնակչությանը պարենային խանութներից կտրոնով կվաճառվի կարագ՝ յուրաքանչյուրին 250 գրամ եւ կես կիլոգրամ բրինձ: Կտրոնով տրվող սննդամթերքի արժեքի փոփոխություն տեղի չի ունեցել՝ 1 կգ կարագը՝ 200 դրամ, իսկ 1 կգ բրինձը՝ 35 դրամ: Երեւանի քաղխորհրդի առեւտրի վարչությունից տեղեկացրին, որ հավանաբար մոտ ժամանակներս ծախսոսը կհանվի ազատ վաճառքի համար:

Որքան մարդ է աշխատում կենտրոնական աղարատներում

ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել նախարարությունների, պետական վարչությունների, գերատեսչությունների, դատախազական մարմինների եւ տեղական խորհուրդների գործկոմների կենտրոնական աղարատների աշխատողների թվաքանակը հաստատելու մասին: Հաստիքային ցուցակները 289 մարդով գլխավորում է ՀՀ կառավարության գործերի կառավարչությունը: Նրան հետեւում են արտաքին գործերի (276), ֆինանսների (235), էկոնոմիկայի (232) նախարարությունները եւ հարկային պետական տեսչությունը (208): 1054 մարդ է աշխատում Երեւանի քաղխորհրդի գործկոմում: Նույն որոշմամբ, պատգամավորների տեղական խորհուրդների գործկոմների գյուղտնտեսության վարչությունների աշխատողների թիվը կրճատվել է 50 տոկոսով: Կրճատվող միավորներից 270-ը թողնվել է գյուղտնտեսության տարածաշրջանային տարեկան՝ հետագայում օգտագործելու նպատակով:

ԱՐՄԵՆ ՊՐԵՍ

Գեղահովտում սիբիրախտի դեպքեր

Գեղահովտի պետական տնտեսության կաթնատրանսֆորմային ֆերմայում գրանցվել են խոշոր եղջերավոր անասունների սիբիրախտ հիվանդության դեպքեր: Մեղմ տեմպերի երկրորդ տասնօրյակում սուր վարակիչ հիվանդությունից մահացել է 11 կով: Գյուղի եւ նրա հարակից բնակավայրերի անասնաբուժական ծառայության կողմից ենթարկվել է պրոֆիլակտիկ պատվաստումների: Միաժամանակ, բժշկական ամենօրյա հսկողություն է սահմանվել հիվանդ կենդանիների հետ շփված մարդկանց նկատմամբ: Առայժմ հիվանդությամբ ախտահարված մարդիկ չկան:

ԱՐՄԵՆ ՊՐԵՍ

ՀԱՄԱՌՈՏ

Մ. Հարությունյանը ՀՀ պաշտպանության առաջին փոխնախարար

Սեպտեմբերի 19-ին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հրամանագիր է ստորագրել, որով գեներալ-մայորի զինվորական կոչում է շնորհել գնդապետ Միխայիլ Հարությունյանին, ԱՊՀ միացյալ զինված ուժերի սպայակույտին կից ՀՀ զինված ուժերի ներկայացուցիչ, գնդապետ Վաղարշակ Հարությունյանին, ՀՀ զինվորական դատախազ, արդարադատության գնդապետ Վաղարշակ Վարդանյանին: Մեկ այլ հրամանագրով Միխայիլ Հարությունյանը նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, զինված ուժերի գլխավոր սպայակույտի պետ:

ԼՏ

Շինարարությունը աղեսի գոտում

1994 թ. առաջին 7 ամիսների ընթացքում «Հայաստան» հիմնադրամի միջոցներով աղեսի գոտում շահագործման է հանձնվել 8,2 հազ. քմ բնակելի մակերես: Աղեսի գոտու վերականգնման ծրագրի իրականացման գրաֆիկը նախատեսել է կատարել 28617 հազ. ԱՄՆ դոլարի կապիտալ ներդրում, որից նշված ժամանակահատվածում կատարել է ընդամենը 1355,8 հազ.-ի, որից 801,1 հազ.-ը՝ արտադրական նշանակության օբյեկտների շինարարության վրա, իսկ 554,7 հազ.-ը՝ բնակելի շենքերի վրա: Երկրաշարժի գոտում նախատեսված է իրացնել 2210,7 մլն. դրամի կապիտալ ներդրում, հունվար-հուլիս ամիսներին յուրացվել է 1122,7 մլն. դրամ կամ տարեկան պլանների 51 տոկոսը: Տարվա ընթացքում նախատեսված է շահագործման հանձնել 64,8 հազ. քմ ընդհանուր մակերեսով բնակելի շենք (հունվար-հուլիսին գործարկվել է 25,4 հազ. քմ), 322 աշակերտական տեղով հանրակրթական դպրոց, 72 տեղով մանկապարտեզ, 50 մահճակալով հիվանդանոց եւ մեկ հերթափոխում 100 հաճախումով պոլիկլինիկա:

ԼՏ

ՍՈՉԻԱԼԱԿԱՆ

Զբաղվածության խնդիրը կլուծվի՞ 400 հազար դոլար վարկով

Հայաստանի Համաբնակչության զբաղվածության ծառայությունից հետո, որի արդյունքում Համաշխարհային բանկը հավանություն է տվել Հայաստանի կառավարության կողմից իրականացվող ծրագրերին, եւ հատկացրել անհրաժեշտ վարկ, 35 տարի ժամկետով: Վահրամ Ներսիսյանցը նշեց, թե նման վարկ տրվել է նաեւ Բոլիվիային եւ Այրանիային, իսկ ԱՊՀ երկրների շարքում Հայաստանն առաջինն է հատացել նման վարկ: Աշխատանքի եւ սոցապ նախարար Աշոտ Եսայանը նշեց, որ վարկի միջոցով իրականացվող ծրագրերը կմեղմացնեն զբաղվածության խնդիրը հանրապետությունում, եւ հույս կա, որ արդեն նոյեմբեր ամսին վերը նշված գումարը կհատացվի:

Ա. Հ.

ԱՆԴՐԱՆԻԿ

Ամբաս Նասիբյանը չի համաձայնում «Տիեզերքի» մեկնաբանությունների հետ

«Ազգի» սեպտեմբերի 16-ի համարում անդրադարձել էինք «Տիեզերք» ՍՊԸ-ի եւ «Արդիբանկի» միջեւ ծագած դժվարություններին, նշելով, թե վերջինս փոխհատուցել է 25 հազար դոլար, հիմնվելով նախնական «Տիեզերքի» փոխտնօրենի տված լրատվության վրա: Մինչդեռ, խմբագրությանը հասցեագրված նամակում, «Արդիբանկի» նախկին ղեկավար Ամբաս Նասիբյանը հայտնելով իր կարծիքը նշում է, թե «Արդիբանկում» երբեք չեն սահմանվել «Տիեզերք» ՍՊԸ-ի գումարները, այդ թվում ԱՄՆ-ի 50 հազար դոլարը, այլ չեղյալ է հայտարարվել փոխարկման գործարքը: Ընդ որում, ըստ պրն. Նասիբյանի, գործարքի չեղյալ հայտարարման համար հիմք է ծառայել «Արժութային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, եւ «Տիեզերքը» կարող էր, առանց որեւէ սահմանափակման, օրենսդրությամբ սահմանված կարգով ազատ տնօրինել իր գումարները: Բացի այդ, պետք է նշել նաեւ, որ ձեռնարկությունների հաշիվների սառեցումը կանոնակարգված է «բանկերի եւ բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով: Ամբաս Նասիբյանն անհամաձայնություն է հայտնում նաեւ, թե Համբարձում Գալստյանի դեմ «իրավապահ մարմինների կողմից ծավալված արշավը» որեւէ կապ չունի «Արդիբանկի» հետ ունեցած գործարքների հետ:

«Արդիբանկի» նախկին ղեկավարը նշում է նաեւ, թե «Տիեզերք» ՍՊԸ-ն փոխարկման գործարքը չեղյալ հայտարարելուց հետո կատարել է բազմաթիվ այլ գործարքներ, այդ թվում նաեւ փոխարկում օրենսդրությամբ սահմանված կարգով: Այդ առթիվ, նա հերքում է նաեւ այն դրությունը, թե իբր իրեն աշխատանքից ազատվելուց առաջ է միայն համաձայնվել փոխանցել այդ գումարը:

Հաջորդ փաստը, որի հետ իր անհամաձայնությունն է հայտնում պրն. Նասիբյանը, այն է, թե ոչ թե ղեկական գանձարանն է տուժել, այլ տվյալ դեպքում «Արդիբանկը», որը կոմերցիոն-բաժնետիրական բանկ է: Ինչ վերաբերում է դեպքի արդիսրաժի կայացրած որոշմանը 25 հազար դոլարի փոխհատուցման մասին, առայժմ պրն. Նասիբյանը արդեն մեր զրույցի ընթացքում նշեց, թե զարմացած է այդ առնչությամբ եւ այն կարծիքը հայտնեց, թե ամեն դեպքում այդ փոխհատուցումը պետք է կատարվի ոչ թե դոլարով, այլ դրամով, ըստ առկա օրենսդրության:

Ա. Հ.

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակչության Դ տան
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեր 562941, AT&T (7 8852) 155065
Գլխավոր խմբագիր
ՏԱՆՈՐ ԱՐԵՏԻՔԵՍՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵՍՆ / 529221
Տնօրեն
ՍՍՐԳԻՍ ՍԱՐԳՍԵՍՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տարածումը ՊԱՌԵԼ ԴԱԼԼԱԲԵՍՆԻ
Apple Macintosh համակարգչային ծառայությամբ «Ազգ» թերթի
Azg armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՇՐՋԱՆ ԱՊՀ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նավթ եւ խաղաղություն, կամ ոչ մեկը, ոչ մյուսը

Ինչ դարաբաղյան ճակատներում ավելի քան 4 ամիս շարունակվող հրադադարը ղեկավարվում է, եւ քաղաքական մեծ համաձայնագրի մշակման աշխատանքները կարծես թե հաջողությամբ առաջ են ընթանում. Բաքվում ստորագրվող նավթային «դարի պայմանագիրն» այդ հանրաղեստության համար հրաշալի առիթ է խոսանում: Պայմանագիրը 70 միլիոնոցից բացի, ադրբեջանցի դիվանագետների կարծիքով, այդ հանրաղեստությանը կբերի նաեւ քաղաքական մեծ հաջողություններ: Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախկին նախագահ, ներկայումս ընդդիմության առաջնորդ Իսա Ղամբարովն այն կարծիքին է, որ նթե Արեւմուտքը լրջորեն հետաքրքրվում է Ադրբեջանով, առա պետք է շահագրգռված լինի նաեւ Ռուսաստանի գործընթացները վերահսկելու մեջ: Բանն այն է, որ ռուսական «Լուկոյլ» նավթային ընկերությանը տրամադրվելիք 10 տոկոս շահաբաժինը, որը դիտվում է որպես Ղարաբաղում խաղաղության հասնելուն եւ նավթային ընկերություններին «կանաչ ճանապարհ» տալու գին, ամբողջը չէ: Ռուսաստանը ձգտում է նաեւ, որ նավթամուղը անցնի իր տարածքով, ինչը լրացուցիչ եկամուտներից բացի Ռուսաստանին հնարավորություն կտա վերահսկել նավթի արտահոսքը եւ վերջին հաշվով քաղաքական լրացուցիչ լծակներ ձեռք բերել Ադրբեջանի վրա ազդելու համար:

Ու մինչ Հայաստանի դաշնակցական շրջանակները շարունակում են քար լռություն դահավանել դարաբաղյան հակամարտության կարգավորման քաղաքական մեծ համաձայնագրի վերաբերյալ ձեռնարկած մնալով դարզ լրատվությունից անգամ, ադրբեջանցի դաշնակցությունները լայնորեն մեկնաբանում են մոսկովյան բանակցությունները՝ հայտարարելով, թե քաղաքական մեծ համաձայնագիրը փաստորեն կայացել է, եւ մնացել է միայն Լաչինի եւ Շուշիի խնդիրը: Ընդ որում, Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովը հայտարարել է, թե առանց Լաչինից եւ Շուշիից հայկական զորքերի դուրսբերման հնարավոր չէ հակամարտության վերջնական կարգավորում միաժամանակ ավելացնելով, որ համաձայնություն է ձեռք բերվել Լաչինի միջանցքի խնդիրը արտացոլվի մեծ համաձայնագրի տեքստում: Հիշեցնենք, որ ավելի վաղ հայկական կողմը հայտարարում էր, թե Լաչինի մասին խոսք անգամ լինել չի կարող: Հասան Հասանովը հայտարարել է նաեւ, թե Ադրբեջանը միշտ էլ դատապարտ է Լաչինով մարդասիրական միջանցք տալ հայերին դայմանով, որ այն չօգտագործվի ռազմական նպատակներով (եթե Ադրբեջանն ավելի վաղ ցուցաբերեր նման «մարդասիրական» մոտեցում, հազիվ թե Լաչինը գրավելու անհրաժեշտություն առաջանար): Ընդհանրապես, ադրբեջանական կողմն այն կարծիքին է, թե գրավյալ տարածքների ազատման ծայնության նշան է:

Ու թեեւ Ադրբեջանին վարդագույն առաջարկ է սպասում նավթային դայմանագրով ու Անդրկովկասի Ջուվեյթ դառնալու հնարավորությամբ, այնուհանդերձ Ադրբեջանի վիճակն այսօր այնքան էլ փայլուն չէ: Երկրի բյուջեի մոտ կեսը ծախսվում է ռազմական նպատակներով, տնտեսությունը քայքայված է, փախստականների ալիքը հասել է Բաքու: Ադրբեջանում այն կարծիքին են, թե նավթային դայմանագրի ստորագրմանը եւ իրականացմանը կխոչընդոտի Ռուսաստանը Ղարաբաղի ռազմական հաջողությունների տեսքով կամ նոր հեղաշրջման միջոցով, որն իշխանության կբերի Այազ Մութալիբովին: Մի բան դարզ է, որ Ադրբեջանին «լիակատար եղանակության համար» դակատում է խաղաղությունը: Նույնը կարելի է ասել նաեւ

Ադրբեջանի ընդդիմությունը տարակարծիք է

ԲԱՔՈՒ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՓՍՍ: Արեւմտյան նավթային ընկերությունների հետ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի ստորագրած դայմանագրի նկատմամբ հանրաղեստության տարբեր քաղաքական ուժերի վերաբերմունքը դարզելու փորձ է ա «Խաբար սերվիս» գործակալությունը: Իսկ է նշել, որ դրանց մեծամասնությունը ողջունում է դայմանագրի ստորագրումը: Ադրբեջանի ազգային անկախության կուսակցության փոխնախագահ, տնտեսագիտության դոկտոր Նազիլ Իմանովը կողմ է արտահայտվել դայմանագրի ստորագրմանը, սակայն հրաժարվել է մեկնաբանել դրա բովանդակությունը՝ դատճառաբանելով, որ ինքը ծանոթ չէ կոնկրետ դայմանների ու թվերի հետ: Պատասխանելով այն հարցին, թե կարո՞ղ է ինչ որ մեկը կամ ինչ որ բան խանգարել դայմանագրի ստորագրմանը, ինչդես արդեն մեկ անգամ եղել է, Իմանովը նշել է, թե հանրաղեստությունը խոհեմ քայլի է գնացել, դայմանագրի ստորագրման տարեթիվը հայտարարելով դրանից ընդամենը մեկ օր առաջ: «Այնդես որ ամենամեծ ցանկության դեդքում իսկ ոչ ոք չի կարող դրան խանգարել, քանզի գործելու շաս ինչ ժամանակ է մնացել» ասել է նա:

Ադրբեջանի իսլամական կուսակցությունը կողմ է արտահայտվել դայմանագրի ստորագրմանը մի դայմանով, որ արեւմտյան ընկերությունները չփորձեն ադրբեջանցի ժողովրդին դարտադրել օտար բարեր ու կենսակերդ:

Ադրբեջանի դեմոկրատական կուսակցության առաջնորդ Սաադաթ Տալեաոլուն դեմ է արտահայտվել դայմանագրի ստորագրմանը, հայտարարելով, որ երբ ժողովրդավարական ուժերը կրկին իշխանության գան, կվերանայեն այդ դայմանագիրը:

Այդուհանդերձ Բաքուն դատրաստվում է բարձրաստիճան հյուրեր ընդունելու: Արեւմտյան նավթային ընկերությունների ներկայացուցիչներից բացի, սպասվում է նաեւ մի շարք երկրների դատվիրակների ժամանումը: Ամեն դեդքում ոչ դատճառական զրույցներում նշվում է, որ հնարավոր է Մեծ Բրիտանիայի ու Թուրքիայի վարչադետների, եւ անգամ ԱՄՆ-ի փոխնախագահ Ալբերտ Գորի ժամանումը:

ՈՌՍԱՍՏԱՆ

Հոկտեմբերը վճռական կլինի

20 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՎՈՍՏԻ: Ռուսաստանի հայրենասիրական ուժերի ազգային կոնգրեսը Ռուսաստանի բոլոր ընդդիմադիր կուսակցություններին եւ շարժումներին հրավիրում է համաժողովի հոկտեմբերի սկզբին: Այդ համաժողովում դետք է վերջնական որոշում ընդունվի առաջիկա նախագահական ընտրություններում ընդդիմության միասնական թեկնածուի առաջադրման մասին: Ազգային կոնգրեսը դետք է նաեւ ծեւավորի Պետական խորհուրդ եւ «սվերային կառավարություն», որոնց մասին որոշումը ընդունվել էր Կալինինգրադում ավարտված ընդդիմության առաջնորդների հանդիպմանը: Նախատեսվող համաժողովին կմասնակցեն Ալեքսանդր Ռուցկոյի «Դերժավա» շարժումը, ՌԴԻ կոմունիստական կուսակցությունը, Սերգեյ Բաբուրինի ռուսասանչյաց համաժողովրդական միությունը, ազգային հանրադետական կուսակցությունը եւ ուրիշ կուսակցություններ եւ կազմակերդություններ: Հոկտեմբերի 4-ը որոշված է համարել «Ընկածների հիշատակի օր»:

Ընդդիմության ուժերի կազմկոմիտեի նախաձեռնող «Սեւ հոկտեմբեր» խումբը սեդտեմբերի 19-ից սկսեց ստորագրություններ հավաքել նախագահական վաղաժամկետ ընտրությունների եւ կառավարության հրաժարականի օգտին: Սակայն անհանգստանալով այս օրերի բախումներից, ընդդիմության կազմակերդությունների ղեկավարները որոշել են միջոցներ ձեռք առնել՝ «զանգվածային անկարգությունները եւ սադրանքները կանխելու ուղղությամբ»:

ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ

Չեչնիա. Դուդաեւը գնո՞ւմ է բանակցությունների

Համաձայն դաշտոնական Գրոզնիի տեղեկատվության, Չեչնիայի նախագահ Ջոխար Դուդաեւի խորհրդական Դաուդ Անմադովը գտնվում է Մոսկվայում ռուս-չեչենական հնարավոր բանակցությունների հեռանկարը դարզելու նդատակով: Ենթադրվում է ռուսական կողմի հետ համաձայնեցնել Ռուսաստանի եւ Չեչնիայի կոնֆեդերատիվ միության մասին երկկողմ դայմանագրի ստորագրման հնարավորությունը: Մինչդեռ «Սեգոդնյա» թերթը հաղորդում է, որ «նախագահի գաղտնի խորհրդակցություն» Անմադովը Մոսկվայում գրադվում է Ռուսաստանի բարձրաստիճան դաշտոնատար անձանց եւ քաղաքական գործիչներին կաշառելով, վերջիններիս կողմից չեչենական խնդրի լուծմանը որոշակիորեն ազդելու նդատակով: «Սեգոդնյան» դնդում է, որ Անմադովին այդ նդատակով տրամադրված են զգալի գումարներ՝ մի քանի միլիարդ ռուբլի եւ մի քանի միլիոն դոլար:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Լեհաստանը վարկ կտրամադրի Ղազախստանին

ՎԱՐՇԱՎԱ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՓՍՍ: Լեհաստանի դաշտոնական դատվիրակությունը վաղաղեց Պավլեկի գլխավորությամբ այսօր սկսեց իր դաշտոնական այցը Ղազախստան եւ Չինաստան: Սդասվում է, որ Ալմա Աթայում կայանալիք հանդիդումների ժամանակ համաձայնագիր կստորագրվի, որով Լեհաստանը 30 մլն. դոլարի վարկ կտրամադրի Ղազախստանին: Հինգշաբթի օրը դատվիրակությունը կլինի Չինաստանում: Լեհաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների նախարարը հայտարարել է, որ Լեհաստանը կարող է 400 մլն. դոլարի վարկային երաշխիք տալ Չինաստանին՝ լեհական ադրանքներ գնելու համար:

«Մեր խնդիրները կլուծենք ինքներս»

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Ղրիմի խորհրդարանի ղեկավարությունը այսօր հանդիդում է Ուկրաինայի Գերագույն խորհրդի հանձնաժողովի հետ, որը բերակոդզի է ժամանել ինքնավար հանրաղետության օրենսդիր եւ գործադիր իշխանության կառույցների միջեւ առաջացած հակամարտության կադակցությամբ: Ղրիմի խորհրդարանի նախագահ Սերգեյ Ցեկովը՝ այս առիթով բդբակիցներին հաղորդեց, որ «հանդիդման արդյունքներով ոչ մի փաստաթուղթ չի ընդունվի, որովհետեւ Ուկրաինայի դաշտգամավորներին ոչ ոք չէր հրավիրել»: «Մեր խնդիրները մենք կլուծենք ինքներս», ավելացրեց նրա տեղակալ Անդրեյ Մելնիկովը:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ

Հյուսիսային Օսիայից ոչ մի հայ չի մեկնել

Օսինգուշական հակամարտության սկզբից ի վեր՝ անցած ամբողջ ժամանակամիջոցում Հյուսիսային Օսիայում աղրող ոչ մի հայ հարկադրաբար չի մեկնել այնտեղից: Այդ մասին Վլադիկավկազից հեռախոսազրույցի ժամանակ «Արմենդրեսի» բդբակցին հաղորդեց տեղի հայ համայնքի խորհրդի անդամ Սերգեյ Ֆարմանյանը: Հյուսիսային Օսիայում, մասնավորապես նրա մայրաքաղաքում, բնիկների եւ հայերի միջեւ ավանդաբար բարեկամական, ջերմ հարաբերություններ են դահպանվում: Տեղական իշխանությունները շարունակում են օժանդակել հայկական մշակութային համայնքի գործունեությանը: Վլադիկավկազում գործում են հայկական եկեղեցի, կիրակնօրյա դդրոց, համայնքի ուժերով դարբերաբար անցկացվում են հայ երաժշտության եւ գրականության երեկույթներ: Ս. Ֆարմանյանը նշեց նաեւ, որ մեր շաս հայրենակիցներ ուսուցիչներ, բժիշկներ, արհեստավորներ այստեղ մեծ հեղինակություն են վայելում, ընդգրկված են մասնագիտական ու հասարակական տարբեր կազմակերդությունների խորհուրդների կազմում:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

«Ազգ» թերթի խմբագրությունը ցավակցություն է հայտնում իր աշխատակից՝ թարգմանիչ Պետրոս Քեշիշյանին հոգ՝

ԱՆԺԵԼԱ ՔԵՇԻՇՅԱՆԻ

ամուսնանալ մահվան կապակցությամբ, ցավակցելով նաեւ հանգուցյալի բոլոր հարազատներին:

ԱԼՍԱ ԱԹԱ

Օրակարգում դարձյալ Եւրասիական միությունն է

ԱԼՍԱ ԱԹԱ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Ղազախստանի մայրաքաղաքում անց է կացվում «Եւրասիական տարածքի սերտաճման ներուժը. հիմնահարցեր եւ իրագործման մեխանիզմներ» համաժողովը: Համաժողովի մասնակիցները կքննարկեն նախագահ Նազարբաեւի Եւրասիական միության ստեղծման մասին գաղափարը: Համաժողովին մասնակցում են ավելի քան 70 դետությունների, ինչդես նաեւ ԱՊՀ 12 երկրների 8 կուսակցությունների եւ շարժումների ներկայացուցիչներ, դիվանագիտական ծառայությունների ղեկավարներ, հասարակայնության ներկայացուցիչներ:

«ՀԱՅՔ-94» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՈՒՂԵՐԹԻ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ
ԵՐԵՎԱՆ - ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՎԱՆ
7, 15, 21 օրով
Գաստաթղթերի ձեւակերպումը 20 օրում:
Գները մատչելի են:
ՀԱՍՑԵՆ՝ «Էրեբունի-1» հյուրանոց, ս. 411
ՀԵՌԱԽՈՍ՝ 562 495

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հրաստամ

- Այս ընթացքում ինչպե՞ս զարգացան հայ-ավստրիական հարաբերությունները եւ ո՞րն էր Ձեր դերն այդ կապերի զարգացման մեջ, ինչի՞ թե հասել:

- Եթե հեռադարձ հայացք նետենք, առա կարելի է ասել, որ Ավստրիայում Հայաստանի դեսպանությունը կայացավ եւ ընդունվեց երկրի դիվանագիտական կորպուսի կողմից: Վիեննայում ներկայացված ԱՊՀ երկրների դեսպանությունների շարքում, հենց ավստրիացիների կարծիքով, մենք երրորդ տեղում ենք մեր ակտիվությամբ թե երկկողմ հարաբերություններում եւ թե միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Իմ աշխատանքը 93-ի կեսերին սկսվեց միջազգային իրավական հիմքեր ստեղծելու ծրագրից, որը ենթադրում էր մի շարք փաստաթղթերի պատրաստում եւ ստորագրում: Արդեն ստորագրվել են առեւտրատնտեսական, օդագնացության մասին համաձայնագրերը, մի շարք այլ փաստաթղթեր, սակայն դրանք դեռեւս ոչինչ չեն ասում, եթե չկան կոնկրետ գործեր: Առաջին հերթին Ավստրիայի եւ Հայաստանի միջեւ երկխոսությունը պետք է սկսվեր քաղաքականության բնագավառում: Այդ ուղղությամբ աշխատանք է տարվել եւ երկրի նախագահի, եւ արտգործնախարարի եւ այլ քաղաքական գերատեսչությունների մակարդակով: Ֆինանսական դժվարություններ կան, եւ բոլոր շահագրգիռ անձինք ցանկության դեպքում կարող են իրենց աջակցությունն ուղարկել Օհան Պետրոսյանի անունով. 6654/082 բանկի 42840 հաշվեհամարով:

- Ինչպիսի՞ն թե տեսնում դեսպանության առաքելությունը:

- Ըստ իս, նկատի ունենալով Ավստրիայի աշխարհաքաղաքական դիրքը եւ մի շարք այլ կարեւոր գործոններ, մեր ներկայացուցչությունն այստեղ դառնալու է կենտրոնական եւրոպայում ՀՀ տարածքային դեսպանություն:

- Գոյություն ունի դեսպանությունը հայ համայնք հարաբերությունների որոշակի մակարդակ: Դո՞ւք էլ այն կարծիքին եք, թե ներկայացնում եք միայն Հայաստանը եւ հայ համայնքի հարցերով չպետք է զբաղվել:

- Ոչ, այդ կարծիքին չեմ: Անշուշտ մենք ներկայացնում ենք Հայաստանը ոչ թե համայնքում կամ համայնքի համար, այլ Ավստրիայի կառավարությունում: Մեր հայրենակիցները հասկացել են սա: Նրանք ըմբռնում են նաեւ այն, որ հայ-ավստրիական հարաբերությունները բոլոր բնագավառներում իրագործվում են դեսպանության միջոցով: Այս իրողությունը թերեւս այնքան էլ դուր չի գալիս համայնքի այն ներկայացուցիչներին, որոնք տարիներ շարունակ իշխանության հետ հարաբերություններ հաստատելու, ինչ-ինչ դրամական աջակցություն ստանալու համար ստեղծել են տարբեր կազմակերպություններ: Ինչպիսի՞ դիրքորոշում են որդեգրել Ավստրիան եւ այդ գործակալությունը:

- Առոմային գործակալությունը դեսպանության համար ունի ոչ այնքան տեխնիկական, որքան քաղաքական նշանակություն: Առանց այս կազմակերպության հեղինակավոր խոսքի, կասկածում եմ, թե հայկական առոմակայանի վերագործարկման աշխատանքները կարող էին սկսվել: Բացի Գերմանիայից, դեմ էր նաեւ Թուրքիան, եւ Ադրբեջանը, որն, իմիջիայլոց, այդ կազմակերպության միջոցով չի ստանալու աշխատանքի համար: Բացի այդ, կազմակերպությունն ունի այլ հնարավորություններ: Արդեն ծրագիր է մշակվում մեր արագացուցչի հիման վրա ստեղծելու քաղաքական վաղահաս կանխորոշման եւ բուժման կենտրոն: Մեծ հեռանկարներ կան հանրաքեռությունում առոմի խաղաղ օգտագործման բնագավառում, ինչը հնարավոր է իրագործել հիմնականում գործակալության օգնությամբ: Կարեւորում եմ նաեւ մեր աշխատանքը Վիեննայում ներկայացված ՄԱԿի առյուծաբերության զարգացման եւ ՄԱԿի բարդեղների դեմ հսկողության կազմակերպություններում: Մշակված է կոնկրետ ծրագիր, եւ տարվա հայաստանի մասնագետների մի խումբ առյուծաբերության ոլորտում օգնություն ցույց տալու նպատակով: ՄԱԿ-ը մտադիր է մեզ կես միլիոն դրամ հատկացնել, բարդեղների հարցում համալիրային ծրագիր իրականացնելու համար:

- Այդ կազմակերպությունների եւ կառավարության համապատասխան օղակների հետ տարվող աշխատանքում ինչպիսի՞ դժվարություններ կան:

- Դժվարությունների հիմնական պատճառը համապատասխան դաշտի բացակայությունն է: Դեռեւս երկու տարի առաջ մշակել էինք ՀՀ ԱԳՆ կանոնադրությունը, որը արժանացել էր նաեւ դեկավարության հավանությանը, բայց ինչ-ինչ պատճառներով այն խորհրդարանում լսվեց: Այդ փաստաթուղթը որոշելու էր արտգործնախարարության տեղը կառավարության կառուցվածքում, մեր գերատեսչության խնդիրների, իրավունքների եւ պարտականությունների ոլորտները: Դա կօգներ առաջիկայում դեսպանություն-ԱԳՆ-այլ նախարարություններ կապը: Այդ կապն իրոք ամրապնդման եւ հսկողության կարիք ունի: Եզակի չեն այն դեպքերը, երբ դեսպանությունում մշակված հարցը ԱԳՆ-ի միջոցով ուղարկվում է համապատասխան նախարարություն, որտեղ այն «կորչում է»: Որպես օրինակ կարող եմ բերել հետեւյալ դեպքը 4 ամիս առաջ ուղարկել եմ 2 երկրների միջեւ կինեմատոգրաֆիայի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի նախագիծը, որի պատասխանը մինչեւ օրս չի տրվել:

- Իսկ արտգործնախարարություն-դեսպանություն կապը կայո՞ւն է:

- Այդ կապը անհրաժեշտ բարձրության վրա չէ, բայց ոչ այնքան գործնական, որքան տեխնիկական պատճառներով: Վիեննա-Հայաստան հեռախոսային կապը սարսափելի վատ է: Ավստրիան լինելով զարգացած երկիր, Հայաստանի հետ արբանյակային կապ չունի: Այլ խնդիր է փակ կապը, որը նաեւ դեկավարության հավանությանը, բայց ինչ-ինչ պատճառներով այն խորհրդարանում լսվեց: Այդ փաստաթուղթը որոշելու էր արտգործնախարարության տեղը կառավարության կառուցվածքում, մեր գերատեսչության խնդիրների, իրավունքների եւ պարտականությունների ոլորտները: Դա կօգներ առաջիկայում դեսպանություն-ԱԳՆ-այլ նախարարություններ կապը: Այդ կապն իրոք ամրապնդման եւ հսկողության կարիք ունի: Եզակի չեն այն դեպքերը, երբ դեսպանությունում մշակված հարցը ԱԳՆ-ի միջոցով ուղարկվում է համապատասխան նախարարություն, որտեղ այն «կորչում է»: Որպես օրինակ կարող եմ բերել հետեւյալ դեպքը 4 ամիս առաջ ուղարկել եմ 2 երկրների միջեւ կինեմատոգրաֆիայի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի նախագիծը, որի պատասխանը մինչեւ օրս չի տրվել:

- Իսկ արտգործնախարարություն-դեսպանություն կապը կայո՞ւն է:

- Այդ կապը անհրաժեշտ բարձրության վրա չէ, բայց ոչ այնքան գործնական, որքան տեխնիկական պատճառներով: Վիեննա-Հայաստան հեռախոսային կապը սարսափելի վատ է: Ավստրիան լինելով զարգացած երկիր, Հայաստանի հետ արբանյակային կապ չունի: Այլ խնդիր է փակ կապը, որը

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Արման Նավասարդյան. «Դեսպանը պետք է անհունորեն նվիրված լինի իր երկրի ազգային շահերին եւ պաշտպանի դրանք»

Հայաստանի նախկին փոխարտգործնախարար Արման Նավասարդյանն արդեն տարիներ է դիվանագիտական աշխատանքի է զբաղվում Ավստրիա: Փորձառու դիվանագետը, որ առաջիններից մեկը եկավ Հայաստան եւ մասնակից դարձավ անկախ հանրապետության նոր արտգործնախարարության ստեղծմանը, այժմ ոչ միայն կատարում է Ավստրիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի պարտականությունները, հոգին մեջ է զցել դեսպանության աշխատանքը, այլեւ լայն գործունեություն է ծավալում Վիեննայում ներկայացված միջազգային ներկայացուցչություններում, ՄԱԿ-ի ինստիտուտներում եւ ԵԱՀԿ-ում: Օգտվելով առիթից, որ դեսպանն այժմ երեւանում է, փորձեցինք զրույցի միջոցով անդրադառնալ հայ-ավստրիական հարաբերություններին եւ արտաքին քաղաքականության մի քանի հրատապ հարցերի:

կով: Կայացավ ՀՀ արտգործնախարարի պաշտոնական այցելությունն Ավստրիա: Դեսպանության հիմնական նպատակներից մեկն էլ այն էր, որ ավստրիացիներին բացատրենք մեր արտաքին քաղաքականության դրույթները, հատկապես Ղարաբաղի հարցում Հայաստանի դիրքորոշումը: Իմ կարծիքով, Ղարաբաղի հիմնահարցում Ավստրիան պետք է դառնա ոչ թե մեր դաշնակիցը, այլ ցուցաբերի դրական չեզոքություն: Որքանո՞վ այն հաջողվեց, դատել ինձանից: Եթե Ավստրիայի մեծ հարեւան Գերմանիան այդ հարցում մեզ համար ոչ բարենպաստ դիրքորոշում էր որդեգրել, առա Վիեննան մինչեւ այսօր կամ լռություն է պահպանում եւ կամ էլ ցուցաբերում հավասարակշռված դիրքորոշում: Սմեն դեպքում պաշտպանելով մեր շահերը, մենք մեր գործընկերներից չպետք է ակնկալենք, որ նրանք միանշանակ գրավեն մեզ համար բարենպաստ դիրքորոշում (դա անվերապահ ուտոպիա կլիներ): Հաստատ գործակցության այլ բնագավառներ էլ կան, օրինակ, գունավոր մետալուրգիան, էլեկտրոնիկան, էներգետիկան, գիտությունն ու մշակույթը, բայց երբեմն պայմաններում դժվար է գտնել ավստրիական մի կազմակերպություն, որը ցանկանա եւ շահագրգռված լինի լուրջ ներդրումներ կատարել Հայաստանում: Սակայն խուսափելով ուղիղ ներդրումներից ավստրիացիները պատրաստ են ֆինանսավորել համատեղ ծրագրեր, եթե կարողանանք առաջարկել, որ դրանք շահաբեր են նրանց համար եւս: Մշակույթի ասպարեզում համագործակցությունն ավելի հեշտ է: Դրա վկայությունն է Ավստրիայում Հայաստանի մշակույթի շաբաթի անցկացումը, որը, ցավոք սրտի, սահմանափակվեց հայ համայնքի շրջանակներում: Հունիս ամսին Բլագենֆուրդ քաղաքում գտնվող հայտնի ցուցահանդեսասրահում ցուցադրվեց Ս. Էջմիածնի Սայաթ-Նովայի մանրակերտը 1x25 մետրի չափով: Տեղի ունեցավ մասնագետների եւ տարբեր փորձագետների փոխանակում: Հաջորդ տարի Վիեննայի կենտրոնական հրապարակներից մեկում Շի լեռնալանջում, նախատեսվում է կանգնեցնել հայ քանդակագործ Օհան Պետրոսյանի նոր աշխատանքը՝ Խրանց Վերֆելի հուշարձանը: Սա կունենա քաղաքական մեծ հնչեղություն, կնպաստի երկու երկրների մերձեցմանը, քանի որ «Մուսա լեռան 40 օրը» անմահ գրքի հեղինակի անունը հավասարապես բանկ է եւ հայ, եւ ավստրիացի ժողովուրդների համար: Սակայն հուշարձանի բացման հետ՝կապված որոշ «դեսպանները» կամ «հյուպատոսները» Վիեննայում: Այս կողմից, դեսպանությունն աշխատում է համայնքի հետ, ձգտելով ճիշտ կառուցել հարաբերությունները: Ամրապնդելով հայրենիք-համայնք կապերը, դեսպանությունը երբեմ չի խառնվում նրա ներքին գործերին: Միշտ պետք է հիշել, որ հայը մնում է այդ երկրի քաղաքացի, ենթարկվում նրա օրենքներին: Եթե խոսելու լինենք անկեղծորեն, դեսպանությունն համայնք հարաբերություններում վերջին տեղը չի գրավում (ֆինանսական խնդիրը): Մենք ակնկալում ենք համայնքի ֆինանսական աջակցությունը ինչպես դեսպանությանը, այնպես էլ հանրապետությանը, որը դրա կարիքն ունի հենց այսօր: Այս կապակցությամբ համայնքի հայրենասիրությունը ես չափում եմ ոչ թե խոսքերով, այլ կոնկրետ գործերով:

- Երկու տարի առաջ մեր զրույցում Դուք նշեցիք, թե ԵԱՀԿ-ում անհրաժեշտ մեխանիզմների բացակայության պատճառով Ղարաբաղի հարցը տեղափոխվեց ՄԱԿ: Կանոնը ցույց տվեց, որ այդ խնդիրը կրկին վերադարձավ ԵԱՀԿ-Մուսասան շրջանակներ: Ղեկավարելով ԵԱՀԿ-ում Հայաստանի պատասխանատու պատվիրակությունը կարո՞ղ եք ասել, թե ինչ տեղաշարժեր են կատարվել այդ կազմակերպությունում:

- ԵԱՀԿ-ն գտնվում է զարգացման գործընթացում: Դա համաեւրոպական բանակցությունների մի մեխանիզմ է, որը ստիպված է վերածվելու է ժամանակակից ներկայացուցչության: Այստեղ ինքարկում են այն բոլոր հարցերը, որոնք ծառացել են եւրոպայի, Միացյալ Նահանգների եւ Կանադայի ժողովուրդների առաջ. ազգամաղաքական, կոնֆլիկտային խնդիրներ, մարդու իրավունքների եւ տնտեսական հարցեր: 52 երկրների ներկայացուցիչների շարքում ինտենսիվ աշխատանք ենք ծավալել նաեւ մենք: Տարեվերջին Բուդապեշտում կկայանա ԵԱՀԿ-ի երկրների գագաթաժողով, որի փաստաթղթերն արդեն նախապատրաստական ընթացքի մեջ են: Կարեւորն այստեղ ազգերի վարքի չափանիշին նվիրված փաստաթուղթն է: ԵԱՀԿ-ի Մոսկվան կոմիտեի ամեն հինգշաբթի օրվա ինքարկումներ հիմնական նյութերից մեկը Ղարաբաղի հարցն է: Դուք ճիշտ եք այն առումով, որ ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորման գործընթացը զարգանում է Վիեննա-Մոսկվա բեռներում: ԵԱՀԿ-ի Մինսկի խումբն, անշուշտ, ակտիվորեն աշխատում է, բայց մեխանիզմները, իրոք, ժամանակին չկային եւ այսօր էլ դեռեւս կա

խնդիրն այն էր, որ Առոմային էներգետիկայի գործակալության միջոցով չեզոքացնենք հակառոմական շարժումը: Գործակալությունը եկավ այն եզրակացության, որ առոմակայանը վտանգ չի ներկայացնում ոչ Հայաստանի, ոչ էլ շրջապատի համար: Այսօր գործակալությունը մեր դաշնակցի դերում է հանդես գալիս եւ փորձում է ամեն կերպ նպաստել ԱէԿ-ի վերաբացմանը: Անհրաժեշտ է, որ Հայաստանը մի մասնագետ ուղարկի գործակալություն՝ ամենօրյա աշխատանքի համար:

